«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 11.05.2017թ.ժամը 17.00

Համաձայն,21.04.2017թ-ին «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 17/17-04 գրությունը «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի գործողությունների/անգործության/ նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու մասին,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչի վարքագծերի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու համար ս/թ-ի Մայիսի 11-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Գևորգ Ֆելիքսի Գևորգյանը:
Դիմումատու՝«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի տնօրեն՝Ս.Երոյանը :

ՍԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Գևորգ Ֆելիքսի Գևորգյանը և դիմումատու նույն ընկերության տնօրեն՝Ս.Երոյանը պատշաճ ծանուցված էին նիստի տեղի և ժամի վերաբերյալ,բայց նիստին չէին ներկայացել:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 17/17-04 գրությունը «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի գործողությունների/անգործության/ նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու մասին,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչի վարքագծերի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված Գրությունը կից փաստաթղթերը և սնանկության գործով կառավարիչ ՝ Գ.Գևորգյանից էլեկտրոնային փոստով ստացված դիմումի պատասխանը և կից փաստաթղթերը, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Ա.Աղամյանը հայտնեց այն կարծիքը,որ ներկայացված դիմումում և կառավարչի ներկայացված պատասխանում առկա չեն բավական փաստեր կողմնորոշվելու և եզրակացություն գալու համար,որին կարող էր օգնել դիմումատուի և սնանկության գործով կառավարչի ներկայությունը, որը այս պահին առկա չէ:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը նույնպես համաձայնեց այն մտքին,որ դիմումատուի և սնանկության գործով կառավարչի ներկայությունը կօգներ եզրակացության գալու,քանի որ փաստական հանգամանքները վերաբերվում են պարտատիրոջ և կառավարչի նախկինում տեղի ունեցած գործնական հարաբերություններին,որը կարող էր հանդիսանալ կառավարչի համար կողմնակալության հիմք կամ կաշկանդվածություն առաջացներ կառավարչի գործողություններում:

Հանձնաժողովի մյուս անդամ՝Հ.Գևորգյանը նույնպես համաձայնեց իր գործընկերների հետ որ սնանկության գործով կառավարչի ներկայությունը սույն վարույթի անցկացման համար պարտադիր է:

Հանձնաժողովի անդամները միահամուռ պահանջեցին հետաձգել հանձնաժողովի նիստը և մյուս նիստին հրավիրել/ապահովվել/ դիմումատուի և սնանկության գործով կառավարչի ներկայությունը,համապատասխան պարզաբանումներ և ճշտումներ տալու անհրաժեշտությունից ելնելով:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 17/17-04 գրությունը «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի գործողություն- ների/անգործության/ նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվու- թյան ենթարկելու մասին,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչի վարքագծերի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցի քննությունը հետաձգել և նշանակել այլ հերթի:

2.Ապահովվել պատշաճ ծանուցումներ՝դիմումատուին և սնանկության գործով կառավարչին:

Հանձնաժողովի Նախագահ՝Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Աղամյան

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան